Արձանագրություն N 3

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73,	03.09.2018թ.
«Կրթական տեխնոլոգիաների	ժամը 11:00
ազգային կենտրոն» ՊՈԱԿ	

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Արմեն Կուլախսզյանը, անդամներ՝ Հայկ Թադևոսյանը, Արաբու Մարքարյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

«ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ

Օրակարգ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:
2. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ
3. Ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու և ՀՀ ֆինանսների նախարարություն տեղեկություն ուղարկելու վերաբերյալ որոշում:
4. «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատում և 1-ին և 2-րդ կետերի հիման վրա ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում:
5. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
6. Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:
7. Հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և տեղը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

1. **<u>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:</u>**

«ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը 27.08.2018թ. հարցում ներկայացրեց (կցվում է) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության (կցվում է)՝

- «Յունիքոմփ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

- «ՍԵԳ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 35000 դրամ ժամկետանց պարտավորություններ, որն ավելին է «ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներակայացված գնային առաջարկի 1%-ից: Հանձնաժողովը որոշեց մերժել «ՍԵԳ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և 2-րդ չափաբաժնի համար ծանուցել «Լանս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում lilit@ktak.am էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին ներկայացնել «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով հրավերի (այսուհետ՝ հրավեր) 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերի հավելված N 6.1-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. **<u>Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ</u>**

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «Լանս» ՍՊԸ-ի՝ հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ համաձայն հրավերի հավելված 8-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

3. **Ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու և ՀՀ ֆինանսների նախարարություն տեղեկություն ուղարկելու վերաբերյալ որոշում**

Հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն և ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

4. **Ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ**

«Յունիքոմփ» ՓԲԸ-ն ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնահատման արդյունքները համարել բավարար և 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել՝ **«Յունիքոմփ» ՓԲԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

5. **Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:**

Հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. **Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ**

Հանձնաժողովը նախագահ Ա. Կուլախսյանն առաջարկեց օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել **«Յունիքոմփ» ՓԲԸ-ին**: Հանձնաժողովը միաձայն ընդունեց Ա. Կուլախսզյանի առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

7. Հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և տեղը հաստատելու մասին

«ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 2018թ. սեպտեմբերի 10-ին ժամը 12:00-ին, հասցեն՝ ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովը նախագահող՝ _____ Ա. Կուլախսզյան

անդամներ՝ _____ Ա. Մարքարյան

_____ Հ. Թադևոսյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան